ՆԱԽԱԳԻԾ

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2026 թվականի N 01-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

1.Վայք համայնքի ավագանու 2026 թվականի հունվարի 12-ի թիվ 01 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին (զեկուցող՝ Ա. Ղազարյան):
2.Վայք համայնքում 2026թ-ին մասնակցային բյուջետավորման գործընթաց սկսելու մասին (զեկուցող՝ Ն. Հովակիմյան):
3. Վայք համայնքի 2025 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվություն ներկայացնելու մասին (զեկուցող՝ Ա. Մանուկյան):
4.Վայք համայնքի բյուջեի միջոցների 2026 թվականի տարեսկզբի ազատ նմացորդի օգտագործման մասին (զեկուցող՝ Ա. Մանուկյան):
5.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրանց դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին (զեկուցող՝ Ա.Հովսեփյան):
6.Վայք համայնքի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների դիմաց 2026 թվականի համար գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին (զեկուցող՝ Ա.Հովսեփյան):
7.Վայք համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին (զեկուցող՝ Ա. Մանուկյան):
8.Վայքի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին (զեկուցող՝ Ա. Ղազարյան):
9.Վայք համայնքի ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին (զեկուցող՝ Ա. Ղազարյան):
10. Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի 22-րդ փողոց, 3/1 հասցեում գտնվող հողատարածքը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու և համայնքի ավագանու 13.11.2025 թվականի թիվ 105-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին (զեկուցող՝ Ռ. Մկրտչյան):
11.Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին (զեկուցող՝ Ռ. Մկրտչյան):
12.Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային եղանակով օտարելուն համաձայնություն տալու, վաճառքի մեկնարկային գինն ու պայմանները սահմանելու մասին (զեկուցող՝ Ռ. Մկրտչյան):
13.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից: